ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Տնօրինության
2019թ. հոկտեմբեր «07» N 227 որոշմամբ

Գլխավոր տնօրեն – Տնօրինության նախագահ
Յու. Գուսև

««ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ փոքր բիզնեսի հաճախորդներին «Ունիվերսալ-բիզնես» վարկատեսակի տրամադրման հայեցակարգ»

1. ՎԱՐԿԱՏԵՍԱԿԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

1. ***Վարկատեսակի անվանում՝*** «Ունիվերսալ-բիզնես» վարկ

2. ***Վարկատեսակի սեփականատեր՝*** Մանրածախ բիզնեսի պրոդուկտների զարգացման վարչություն (այսուհետ՝ ՄԲՊԶՎ)

3. ***Վարկատեսակի նկարագրություն՝*** «Ունիվերսալ-բիզնես» վարկը ՄՎՀ միջոցով քննարկվող վարկատեսակ է, որը հնարավորություն է տալիս կարճ ժամկետներում բավարարել հաճախորդի պահանջմունքները փոխառու միջոցների նկատմամբ (հիմնական/շրջանառու միջոցների համալրում, տարբեր բիզնես խնդիրների լուծում) առանց գրավային ապահովման մինչև 2 անձի երաշխավորությամբ: Վարկային հայտերի որոշումները ընդունվում են 8 ժամվա ընթացքում ՄՎՀ-ում: Հայտը ուսումնասիրվում է հայտում ներկայացված տվյալների հիման վրա առանց ֆինանսական վերլուծության իրականացման (եթե սույն փաստաթղթով այլ բան նախատեսված չէ), կցվում են միայն բիզնեսի լուսանկարները և լրացված հարցաթերթիկը, համաձայն Հավելված 1 (մինչև ավտոմատացումը, ավտոմատացումից հետո հարցաթերթիկը կլրացվի ՄՎՀի հայտում): Չնայած այն բանի, որ ֆինանսական տվյալները հարցաթերթիկում լրացվում են մասնագիտական գնահատման հիման վրա, ՓԲ վաճառքի գծով մենեջերը պատասխանատվություն է կրում անձամբ այց կատարելու և հարցաթերթիկի լրացման համար:

4. ***Հաճախորդ/Փոխառու՝*** ՀՀ ռեզիդենտներ հանդիսացող իրավաբանական անձինք/անհատ ձեռներեցներ, որոնք վարում են ձեռնարկատիրական գործունեություն (փաստացի և պաշտոնական ժամկետ) 6 և ավել ամիսև դիմել են Բանկ վարկային գործարք կնքելու նպատակով:

5. ***Նպատակային սեգմենտ – ֆոկուս խումբ՝*** Ֆոկուս խումբ են հանդիսանում մեծա-մանրածախ առևտրային գործունեություն իրականացնող, արտադրությամբ, շինարարությամբ, տարբեր ծառայությունների մատուցմամբ զբաղվող իրավաբանական անձինք/անհատ ձեռներեցներ, , որոնք կարճ ժամկետում ցանկանում են ստանալ ոչ մեծ գումարի վարկ:

6. ***Վարկատեսակի նպատակը.***

a. **Բանկի համար՝** Հաճախորդային բազայի ավելացում և տոկոսային եկամուտի ստացում:
b. **Հաճախորդի համար՝** կարճ ժամկետում վարկի ստացում առանց գրավային ապահովման:.

7. ***Վաճառակետեր՝*** Բանկի ներկայության բոլոր տարածաշրջաններ:

8. ***Վաճառաուղիներ***՝ ուղիղ մարկետինգ, վեբ-կայք, մարկետինգային նյութեր, գովազդ:

2. *ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐ*

9. Վարկատեսակի հիմնական պայմանները և պահանջները համաձայն աղյուսակի.

1.	**Գումար**	150.000 – 1.000.000	1.000.001 – 5.000.000[1][2]
2.	**Տոկոսադրույք** (տոկոսների հաշվեգրումը սկսվում է վարկային հաշվին վարկի գումարի մուտքագրման ամսաթվից և կատարվում է փաստացի օգտագործման օրերի համար)	Տարեկան 22% Այն դեպքում, եթե հայտը նաև բավարարում է հետևյալ պահանջներին, վարկի տոկոսադրույքը սահմանվում է տարեկան 13.9%. 1. Վարկի նպատակ պետք է հանդիսանա շրջանառու միջոցների (բացառությամբ ոգելից խմիչքների և ծխախոտի) կամ հիմնական միջոցների համալրումը, որոնք ձեռք են բերվում առաջնային շուկայից կամ վերանորոգման աշխատանքների իրականացում: 2. Համաշխարհային բանկի միջոցներով տրամադրված հաճախորդի գումարային պարտավորությունները ՀՀ Բանկերի հանդեպ, չեն կարող գերազանցել 160 000 000 ՀՀ դրամ: 3. Հաճախորդի բիզնեսի փաստացի և պաշտոնական նվազագույն ժամկետը կազմում է 12 ամիս: 4. Ստանդարտից բարձր դասակարգման բացակայություն վերջին 12 ամսվա ընթացքում: 5. Վարկերի սպասարկման ժամկետանց օրերի առավելագույն գումարը վերջին 12 ամսվա ընթացքում՝ 15 օրից ոչ ավել: Եթե վարկը տրամադրվել է 13.9% տարեկան տոկոսադրույքով, ապա. 1. Կատարվում է վարկային միջոցների օգտագործման նպատակային մոնիթորինգ Բանկի գործող իրավական ակտերով սահմանված	

[1] Եթե հաճախորդը Բանկում ունի գործող առանց գրավային ապահովման բիզնես վարկ կամ սպառողական վարկ, տրմադրված բիզնեսից եկամուտների հիման վրա, ապա գումարային պարտավորությունները «Ունիվերսալ-բիզնես» վարկը տրամադրելուց հետո չպետք է գերազանցի 5.000.000 ՀՀ դրամ/կամ համարժեք (եթե սույն փաստաթղթով այլ բան նախատեսված չէ):

[2] Վարկերի գնման/վերագնման դեպքում վարկի առավելագույն գումարը սահմանվում է 7.000.000 ՀՀ դրամ:

		ժամկետներում: 2. Վարկի տրամադրման միջնորդավճարը սահմանվում է 2%: 3. Եթե վարկի նպատակ է հանդիսանում հիմնական միջոցների ձեռքբերումը (բացառությամբ վերանորոգման աշխատանքների) և վարկի գումարի 33% և ավել պետք է ուղղվի հիմնական միջոցների ձեռքբերմանը, հայտում անհրաժեշտ է լրացնել վաճառողի կոնտակտային և անձնագրային տվյալները և հայտի ուսումնասիրման համար ՎՍԲ-ի համար նախատեսված ժամկետը սահմանվում է մինչև 8 ժամ: 4. Վարկը տրամադրելու օրվանից 60 (վաթսուն) օրացուցային օրվա ընթացքում Համաշխարհային բանկի կողմից վարկի չվերաֆինանսավորման դեպքում, Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել վարկի տոկոսադրույքը համաձայն տվյալ պահին վարկատեսակի գործող սակագների:	
3.	**Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար**	2%[3] կամ 2.5%	
4.	**Վճարունակության գնահատում**	1. Բիզնեսի լուսանկարներ 2. Հարցաթերթիկ (Հավելված 1)	
5.	**Ապահովվածություն**	1 անձի երաշխավորություն. 1. ԻԱ համար՝ ընկերության տնօրեն կամ հիմնադիր (ով հանդիսանում է իրական շահառու), ԱՁ համար՝ ընտանիքի անդամ (առկայության դեպքում) կամ երրորդ անձի երաշխավորություն (երաշ-խավորի եկամտի առկայու-	2 անձանց երաշխավորություն. 1. ԻԱ համար՝ ընկերության տնօրեն և/կամ հիմնադիր, տնօրենի կամ հիմնադրի ընտանիքի անդամ (առկայության դեպքում), ԱՁ համար՝ ընտանիքի անդամ (առկայության դեպքում) կամ երրորդ անձի երաշխավորություն[4], 2. ֆինանսական երաշխավոր՝ աշխատավարձ և նվազագույնը 4 ամիս ստաժ ունեցող կամ շահույթ և նվազագույնը 3 ամիս

[3] Եթե վարկը տրամադրվում է Համաշխարհային բանկի միջոցներով, միանվագ միջնորդավճարը սահմանվում է 2%:

[4] Եթե հաճախորդը վերջին տրվա ընթացքում սպասարկել է/սպասարկում է գումարային 20 մլն. ՀՀ դրամ և ավել բիզնես վարկ/եր (համարժեք արտարժույթ), առաջին անձի երաշխավորությունը պարտադիր չէ:

		թյունը պարտադիր չէ)	գործունեության ժամկետ ունեցող (ֆինանսական երաշխավորի եկամուտի աղբյուրը չպետք է կախված լինի փոխառուից կամ նրա փոխկապակցված անձից)
6.	**Գործարքի մասնակիցների վարկային պատմության գնահատում**	1. Փոխառու, 2. Երաշխավոր/ներ, 3. Փոխառուի ամուսին/կին, որոնց բացակայության դեպքում ընտանիքի այլ անդամ, 4. Բիզնեսի իրական գործընկերները Ընդ որում հայտում որպես գործարքի մասնակիցներ (Գործարքի մասնակիցներ) մուտքագրվում են միայն վերը նշված անձանց տվյալները	
7.	**Նվազագույն պահանջներ Փոխառուի նկատմամբ**	1. ՀՀ ռեզիդենտություն, 2. Տարիքը՝ 21 – 65 տարեկան, 3. Բիզնեսի նվազագույն փաստացի և պաշտոնական ժամկետը՝ 6 ամիս (եթե սույն փաստաթղթով այլ բան նախատեսված չէ), 4. Դատական մարմիններ ներկայացված հայցերի, Հաճախորդին սնանկ ճանաչելու մասին դատական մարմինների որոշումների (եթե առկա է հավաստի տեղեկատվություն), ինչպես նաև Հաճախորդի կամ նրա փոխկապակցված անձանց (Հաճախորդի ամուսին/կին, բիզնեսի գծով իրական գործընկերներ) ԴԱՀԿԾ կողմից հաշիվների վրա դրված կալանքների բացակայություն: ԴԱՀԿԾ կողմից հաշիվների վրա դրված կալանքների առկայության դեպքում, որոնց գումարը չի գերազանցում 150.000 ՀՀ դրամը, վարկը տրամադրվում է միայն կալանքները հանելուց հետո: Եթե ԴԱՀԿԾ կողմից հաշիվների վրա դրված կալանքների գումարը գերազանցում է 150.000 ՀՀ դրամը, հայտը մերժվում է: Եթե ԴԱՀԿԾ կողմից Փոխառուի ընտանիքի անդամների (ում հետ Փոխառուն փաստացի ապրում է) հաշիվների վրա դրված կալանքների գումարը չի գերազանցում 150.000 ՀՀ դրամը, ՎՍԲ կողմից հայտին շնորհվում է «Սպիտակ գոտի» կարգավիճակ, հակառակ դեպքում՝ «Մոխրագույն գոտի»:	
8.	**Նվազագույն պահանջներ Երաշխավորի նկատմամբ**	1. ՀՀ ռեզիդենտություն, 2. Տարիքը՝ 21 – 65 տարեկան,	

		3. Բիզնեսի նվազագույն փաստացի և պաշտոնական ժամկետը՝ 3 ամիս (ԻՄ/ԱՁ համար), 4. Բացասական վարկային պատմության բացակայություն (համաձայն Բանկի պահանջների)
9.	**Մորատորիում**	Կրկնակի հայտի մորատորիումը կազմում է 60 օր «Ունիվերսալ-բիզնես»/ «Հիմա» վարկատեսակի մերժման որոշում կայացնելու օրվանից:
10.	**Նպատակային մոնիթորինգ**	Վարկային միջոցների նպատակային օգտագործման մոնիթորինգ չի անցկացվում:
11.	**Որոշման գործողության ժամկետը**	Վարկի ստացման որոշումը վավերական է ՄՎՀ-ում հայտի հաստատման օրվանից 15 օրվա ընթացքում:
12.	**Վարկի գործողության առավելագույն ժամկետ**	Մինչև 3.000.000 ՀՀ դրամ գումարի դեպքում՝ 36 ամիս 3.000.001-ից մինչև 5.000.000 ՀՀ դրամ գումարի դեպքում՝ 48 ամիս
13.	**Ժամկետանց հիմնական պարտավորության և տոկոսների գծով տույժ**	0.2% օրական
14.	**Պարտավորության մարում**	Աննուիտետային վճարումներ, ճկուն ժամանակացույց, կախված բիզնեսի սեզոնայնությունից (պարտավորության մարումը ճկուն ժամանակացույցով ուժի մեջ մտնում ՄՎՀ-ում ավտոմատացումից հետո):
15.	**Վարկի տրամադրման եղանակ**	Վարկը տրամադրվում է անկանխիկ: Վարկը կարող է տրամադրվել բիզնես քարտով:
16.	**Վարկի օգտագործման եղանակ**	Կանխիկ, անկանխիկ
17.	**Միջնորդավճար վարկի վաղաժամկետ մարման համար**	0%
18.	**Այլ**	1. Վարկը ձևակերպվում և տրամադրվում է համապատասխան վարկային և ապահովման պայմանագրերը ստորագրելուց հետո, Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան («ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ փոքր բիզնեսի սուբյեկտների վարկավորման ուղեցույց») և այլն): 2. Վարկի արժեքային պայմաններն որոշվում են համաձայն «Ունիվերսալ-

		բիզնես» վարկատեսակի Սակագներին համաձայն (Հավելված 2):

3. ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԱՅԼ ԲԱՆԿԵՐԻՑ/ՈՒՎԿ-ԻՑ ՎԱՐԿԵՐԻ ՎԵՐԱԳՆՄԱՆ/ ԳՆՄԱՆ ՀԱՄԱՐ

Վարկերի վերագնում

10. Հաճախորդը 2012թ-ից ունեցել է բիզնես վարկ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում, որը մարել է:
11. Չպետք արձանագրված լինի բիզնեսի վատթարացում նախկին տվյալների համեմատ.
    i. հաճախորդի/փոխկապակցված անձանց խմբի սեփական կապիտալի նվազեցում չի թույլատրվում,
    ii. բիզնեսի զուտ շահույթի թույլատրելի նվազեցման չափը 20%:
12. Բիզնես վարկի առկայություն այլ Բանկում/ ՈՒՎԿ-ում, որը սպասարկվում է առնվազն 6 ամիս:
13. Վարկերի ժամկետանց օրերի առավելագույն գումարը վերջին 12 ամսվա ընթացքում՝ 15 օրից ոչ ավել:
14. Ստանդարտից բարձր դասակարգման բացակայություն վերջին 24 ամսվա ընթացքում:
15. Գումարի և տոկոսադրույքի գծով պայմանները համաձայն աղյուսակի.

	Տարբերակ 1	**Տարբերակ 2**
Տոկոսադրույք	20%	22%
Նվազագույն գումար	3.000.000 ՀՀ դրամ	5.000.001 ՀՀ դրամ
Վարկի առավելագույն գումար	5.000.000 ՀՀ դրամ	7.000.000 ՀՀ դրամ
Սահմանաչափի ավելացում	Վարկի առավելագույն գումարը չի կարող գերազանցել այլ բանկում/ՈՒՎԿ-ում սպասարկվող վարկի գումարը +25%	Վարկի առավելագույն գումարը չի կարող գերազանցել այլ բանկում/ՈՒՎԿ-ում սպասարկվող վարկի գումարը +25%

16. Վարկի առավելագույն ժամկետը սահմանվում է մինչև 60 ամիս:
17. Եթե հայտի հաստատման պահին Հաճախորդի պարտավորության գումարը գտնվում է 3մլն. – 5 մլն. ՀՀ դրամ միջակայքում, ապա իրականացվում է այցելություն հարցաթերթիկի լրացմամբ (Հավելված 1) և բիզնեսի լուսանկարահանում, եթե հայտի հաստատման պահին Հաճախորդի պարտավորության գումարը գտնվում է 5 մլն. – 7 մլն. ՀՀ դրամ միջակայքում (գումարային առանց ֆինանսական վերլուծության տրված բիզնես վարկերի և բիզնես եկամուտների հիման վրա տրված

սպառողական վարկերի գծով), ապա իրականացվում է բիզնեսի ֆինանսական վերլուծության և լրացվում է ռեզյումե (համաձայն Հավելված 3), որը կցվում է ՄՎՀ-ում (մինչև ավտոմատացումը, ավտոմատացումից հետո հարցաթերթիկը կլրացվի ՄՎՀ-ի հայտում): Վարկային հայտի որոշումը ընդունվում է ՄՎՀ-ում:

18. Վարկի նպատակ կարող է հանդիսանալ ինչպես վարկի վերագնումը, այնպես էլ հիմնական/շրջանառու միջոցների համալրումը, տարբեր բիզնես խնդիրների լուծումը:
19. Վարկային միջոցների նպատակային օգտագործման մոնիթորինգ չի իրականացվում:
20. Համապատասխան մասնաճյուղի իրավասու աշխատակիցը տրամադրված վարկի գումարից իրականացնում է փոխանցում այլ բանկ/ՈՒՎԿ ԱՔՌԱ բյուրոյի տվյալների համաձայն վարկի/վարկերի մնացորդների մարման համար:
21. Կրկնակի հայտի մորատորիումը կազմում է 60 օր «Ունիվերսալ-բիզնես»/ «Հիմա» վարկատեսակիմերժման որոշում կայացնելու օրվանից:
22. Վարկի ստացման որոշումը վավերական է ՄՎՀ-ում հայտի հաստատման օրվանից 15 օրվա ընթացքում:
23. Պարտավորությունների կատարման ապահովում է հանդիսանում 2 անձանց երաշխավորություն (1-ին անձ ԻԱ համար՝ ընկերության տնօրեն և/կամ հիմնադիր, տնօրենի կամ հիմնադրի ընտանիքի անդամ (առկայության դեպքում), ԱՁ համար՝ ընտանիքի անդամ (առկայության դեպքում) կամ երրորդ անձի երաշխավորություն, 2-րդ անձ՝ աշխատավարձ և նվազագույնը 4 ամիս ստաժ ունեցող կամ շահույթ և նվազագույնը 3 ամիս գործունեության ժամկետ ունեցող (ֆինանսական երաշխավորի եկամուտի աղբյուրը չպետք է կախված լինի փոխառուից կամ նրա փոխկապակցված անձից)):[5]
24. Հաճախորդը պետք է համապատասխանի հետևյալ նվազագույն պահանջներին.
    i. ՀՀ ռեզիդենտություն,
    ii. Տարիքը՝ 21 – 65 տարեկան,
    iii. Բիզնեսի նվազագույն փաստացի և պաշտոնական ժամկետը՝ 6 ամիս (եթե սույն փաստաթղթով այլ բան նախատեսված չէ),
    iv. Հաճախորդի կամ նրա փոխկապակցված անձանց բացասական վարկային պատմության բացակայություն (Հաճախորդի ամուսին/կին, իրական գործընկերներ բիզնեսի գծով) (համաձայն Բանկի պահանջների),
    v. Դատական մարմիններ ներկայացված հայցերի, Հաճախորդին սնանկ ճանաչելու մասին դատական մարմինների որոշումների (եթե առկա է հավաստի տեղեկատվություն), ինչպես նաև Հաճախորդի կամ նրա փոխկապակցված անձանց (Հաճախորդի ամուսին/կին, բիզնեսի գծով իրական գործընկերներ) ԴԱՀԿԾ կողմից հաշիվների վրա դրված կալանքների բացակայություն: ԴԱՀԿԾ կողմից հաշիվների վրա դրված կալանքների

[5] Եթե հաճախորդը վերջին տրվա ընթացքում սպասարկել է/սպասարկում է գումարային 20 մլն. ՀՀ դրամ և ավել բիզնես վարկ/եր (համարժեք արտարժույթ), առաջին անձի երաշխավորությունը պարտադիր չէ:

առկայության դեպքում, որոնց գումարը չի գերազանցում 150.000 ՀՀ դրամ, վարկը տրամադրվում է միայն կալանքները հանելուց հետո: Եթե ԴԱՀԿԾ կողմից հաշիվների վրա դրված կալանքների գումարը գերազանցում է 150.000 ՀՀ դրամ, հայտը մերժվում է:

25. Երաշխավորը պետք է համապատասխանի հետևյալ նվազագույն պահանջներին.
    i. ՀՀ ռեզիդենտություն,
    ii. Տարիքը՝ 21 – 65 տարեկան,
    iii. Բիզնեսի նվազագույն փաստացի և պաշտոնական ժամկետը՝ 3 ամիս (ԻԱ/ԱՁ համար),
    iv. Բացասական վարկային պատմության բացակայություն (համաձայն Բանկի պահանջների):

Վարկի գնում

26. Հաճախորդը նախկինում վարկեր ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում չի ունեցել:
27. Բիզնես վարկի առկայություն այլ Բանկում/ ՈՒՎԿ-ում, որը սպասարկվում է առնվազն 6 ամիս:
28. Վարկերի ժամկետանց օրերի առավելագույն գումարը վերջին 12 ամսվա ընթացքում՝ 15 օրից ոչ ավել:
29. Ստանդարտից բարձր դասակարգման բացակայություն վերջին 24 ամսվա ընթացքում:
30. Գումարի և տոկոսադրույքի պայմանները համաձայն աղյուսակի.

	Տարբերակ 1	**Տարբերակ 2**
Տոկոսադրույք	20%	22%
Նվազագույն գումար	3.000.000 ՀՀ դրամ	5.000.001 ՀՀ դրամ
Վարկի առավելագույն գումար	5.000.000 ՀՀ դրամ	7.000.000 ՀՀ դրամ
Սահմանաչափի ավելացում	Վարկի առավելագույն գումարը չի կարող գերազանցել այլ բանկում/ՈՒՎԿ-ում սպասարկվող վարկի գումարը +25%	Վարկի առավելագույն գումարը չի կարող գերազանցել այլ բանկում/ՈՒՎԿ-ում սպասարկվող վարկի գումարը +25%

31. Վարկի առավելագույն ժամկետը սահմանվում է մինչև 60 ամիս:
32. Եթե հայտի հաստատման պահին Հաճախորդի պարտավորության գումարը գտնվում է 3մլն. – 5 մլն. ՀՀ դրամ միջակայքում, ապա իրականացվում է այցելություն հարցաթերթիկի լրացմամբ (Հավելված 1) և բիզնեսի լուսանկարահանում, եթե հայտի հաստատման պահին Հաճախորդի պարտավորության գումարը գտնվում է 5 մլն. – 7 մլն. ՀՀ դրամ միջակայքում (գումարային առանց ֆինանսական վերլուծության տրված բիզնես վարկերի և բիզնես եկամուտների հիման վրա տրված

սպառողական վարկերի գծով), ապա իրականացվում է բիզնեսի ֆինանսական վերլուծության և լրացվում է ռեզյումե (համաձայն Հավելված 3), որը կցվում է ՄՎՀ-ում (մինչև ավտոմատացումը, ավտոմատացումից հետո հարցաթերթիկը կլրացվի ՄՎՀ-ի հայտում): Վարկային հայտի որոշումը ընդունվում է ՄՎՀ-ում:

33. Վարկի նպատակ կարող է հանդիսանալ ինչպես վարկի գնումը, այնպես էլ հիմնական/շրջանառու միջոցների համալրումը, տարբեր բիզնես խնդիրների լուծումը:
34. Վարկային միջոցների նպատակային օգտագործման մոնիթորինգ չի իրականացվում:
35. Կրկնակի հայտի մորատորիումը կազմում է 60 օր «Ունիվերսալ-բիզնես»/ «Հիմա» վարկատեսակի մերժման որոշում կայացնելու օրվանից:
36. Վարկի ստացման որոշումը վավերական է ՄՎՀ-ում հայտի հաստատման օրվանից 15 օրվա ընթացքում:
37. Համապատասխան մասնաճյուղի իրավասու աշխատակիցը տրամադրված վարկի գումարից իրականացնում է փոխանցում այլ բանկ/ՈՒՎԿ ԱՔՌԱ բյուրոյի տվյալների համաձայն վարկի/վարկերի մնացորդների մարման համար:
38. Պարտավորությունների կատարման ապահովում հանդիսանում է 2 անձանց երաշխավորություն (1-ին անձ ԻԱ համար՝ ընկերության տնօրեն և/կամ հիմնադիր, տնօրենի կամ հիմնադրի ընտանիքի անդամ (առկայության դեպքում), ԱՁ համար՝ ընտանիքի անդամ (առկայության դեպքում) կամ երրորդ անձի երաշխավորություն, 2-րդ անձ՝ աշխատավարձ և նվազագույնը 4 ամիս ստաժ ունեցող կամ շահույթ և նվազագույնը 3 ամիս գործունեության ժամկետ ունեցող (ֆինանսական երաշխավորի եկամուտի աղբյուրը չպետք է կախված լինի փոխառուից կամ նրա փոխկապակցված անձից)):[6]
39. Հաճախորդը պետք է համապատասխանի հետևյալ նվազագույն պահանջներին.
    i. ՀՀ ռեզիդենտություն,
    ii. Տարիքը՝ 21 – 65 տարեկան,
    iii. Բիզնեսի նվազագույն փաստացի և պաշտոնական ժամկետը՝ 6 ամիս (եթե սույն փաստաթղթով այլ բան նախատեսված չէ),
    iv. Հաճախորդի կամ նրա փոխկապակցված անձանց բացասական վարկային պատմության բացակայություն (Հաճախորդի ամուսին/կին, իրական գործընկերներ բիզնեսի գծով) (համաձայն Բանկի պահանջների),
    v. Դատական մարմիններ ներկայացված հայցերի, Հաճախորդին սնանկ ճանաչելու մասին դատական մարմինների որոշումների (եթե առկա է հավաստի տեղեկատվություն), ինչպես նաև Հաճախորդի կամ նրա փոխկապակցված անձանց (Հաճախորդի ամուսին/կին, բիզնեսի գծով իրական գործընկերներ) ԴԱՀԿԾ կողմից հաշիվների վրա դրված կալանքների բացակայություն: ԴԱՀԿԾ կողմից հաշիվների վրա դրված կալանքների

[6] Եթե հաճախորդը վերջին տրվա ընթացքում սպասարկել է/սպասարկում է գումարային 20 մլն. ՀՀ դրամ և ավել բիզնես վարկ/եր (համարժեք արտարժույթ), առաջին անձի երաշխավորությունը պարտադիր չէ:

առկայության դեպքում, որոնց գումարը չի գերազանցում 150.000 ՀՀ դրամ, վարկը տրամադրվում է միայն կալանքները հանելուց հետո: Եթե ԴԱՀԿԾ կողմից հաշիվների վրա դրված կալանքների գումարը գերազանցում է 150.000 ՀՀ դրամ, հայտը մերժվում է:

40. Երաշխավորը պետք է համապատասխանի հետևյալ նվազագույն պահանջներին.
    i. ՀՀ ռեզիդենտություն,
    ii. Տարիքը՝ 21 – 65 տարեկան,
    iii. Բիզնեսի նվազագույն փաստացի և պաշտոնական ժամկետը՝ 3 ամիս (ԻԱ/ԱՁ համար),
    iv. Բացասական վարկային պատմության բացակայություն (համաձայն Բանկի պահանջների):

4. *ԹՈՊ-ԱՊ (ՆԱԽԱՀԱՍՏԱՏՎԱԾ) ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ*

41. Լոյալ կրկնակի հաճախորդներին տրամադրվում են նախահաստատված վարկեր գործող վարկի/ների մարման պայմանով:
42. Առավելագույն սահմանաչափը չպետք է գերազանցի վարկի նախապես տրամադրված գումարը:
43. Մի քանի զուգահեռ վարկերի առկայության դեպքում նախահաստատված վարկի գումարը որոշելու համար պետք է վերցնել վերջին տրամադրված գումարի և վերջին «Ունիվերսալ-բիզնես»/«Հիմա» վարկի տրամադրման պահին բոլոր զուգահեռաբար սպասարկվող վարկերի մնացորդների գումարը:
44. Ժամկետը կարող է երկարացվել մինչև տվյալ վարկատեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը:
45. Բանկում մեկ վարկի սպասարկման նվազագույն ժամկետը 12 ամիս է:
46. Միևնույն հաճախորդին նախահաստատված վարկերի տրամադրումը կարելի է իրականացնել 12 և ավել ամիս ժամկետը լրանալու դեպքում:
47. Վերագնվող վարկի/երի ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի 15 օր:
48. Գործող ժամկետանցի/դասակարգումների բացակայություն վարկի տրամադրման պահին:
49. Պարտավորությունների կատարման ապահովում է հանդիսանում գործող վարկի երաշխավորների երաշխավորությունը:
50. Հաճախորդը պետք է համապատասխանի հետևյալ նվազագույն պահանջներին.
    i. Տարիքը մինչև 65 տարեկան,
51. Երաշխավորը պետք է համապատասխանի հետևյալ նվազագույն պահանջներին.
    i. Ստուգումն ըստ տարիքի՝ մինչև 65 տարեկան,
52. Problem and Watch list և գործունեության գործողության ստուգում (փակում/լուծարում/ կասեցում), ինչպես նաև այլ բացասական գործոնների առկայություն Փոխառուի և Երաշխավորի վերաբերյալ:
53. Տրամադրման գործընթացը.

i. ՄԲՊԶՎ (CRM)՝ պարբերաբար արտահանում է 42-51 չափանիշներին բավարարող բազան՝ նշելով գործարքի գծով ընդհանուր սահմանաչափը,
ii. ցուցակը ուղարկվում է ՎՍԲ, որը 2 օրվա ընթացքում (յուրաքանչյուր 200 փոխառուների գծով) ստուգում է բոլոր փոխառուներին 52-րդ կետին համապատասխան և ուղարկում միայն բավարարող հաճախորդների ցուցակը,
iii. ցուցակը ստանալուց հետո ՓԲ վաճառքի գծով մենեջերը զանգահարում է հաճախորդներին և տեղեկացնում վարկային սահմանաչափի վերականգման հնարավորության մասին: Հաճախորդի կողմից Բանկ դիմելու դեպքում, ՓԲ վաճառքի գծով մենեջերը ստուգում է հաճախորդի առկայությունը ցուցակում և դրական արդյունքի դեպքում ներկայացնում է հայտը ստորագրման և պայմանավորվում է ՓԲՎ և վերաֆինանսավորման գծով վարկային գործարքների ձևակերպման բաժնի աշխատակցի հետ վարկային և ապահովման պայմանագրերի ստորագրման ժամի և գործող վարկի մարմամբ վարկի ձևակերպման վերաբերյալ: Ընդ որում մարման ժամանակացույցի տեսակը մնում է նույնը, ինչ գործող վարկի դեպքում է:
iv. միանվագ միջնորդավճարը գանձվում է վարկի ավելացված մասից:

54. Վարկային միջոցների նպատակային օգտագործման մոնիթորինգ չի անցկացվում:
55. Վարկի ստացման որոշումը վավերական է ՄՎՀ-ում հայտի հաստատման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում:

5. *ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԳՈՐԾԱՐՔԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ*

Փոխառուի համար.

56. Վարկի ստացման նախնական դիմում /պարտադիր չէ/ (Հավելված 4),
57. Վարկի ստացման դիմում (Հավելված 5.1 կամ 5.2),
58. ԱՁ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, ԻԱ տնօրենի և հիմնադրի անձնագրերի և սոցիալական քարտերի/հանրային ծառայությունների համարանիշի կամ ID քարտի պատճենները (հանրային ծառայությունների համարանիշի կամ սոցիալական քարտի բացակայության դեպքում՝ տեղեկանք բացակայության մասին),
59. Ամուսնալուծության վկայական, եթե Փոխառուն ամուսնալուծված է և Փոխառուի ամուսնությունը պաշտոնապես գրանցված եղել է,
60. Փոխառուի, հիմնադիրրի պետական գրանցման վկայականի պատճեն կամ Միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք,

61. ԱՁ/ ԻԱ Փոխառուի, հիմնադրի ՀՎՀՀ պատճեն (առկայության դեպքում),
62. Կանոնադրության պատճեն (ԻԱ Փոխառուի, հիմնադրի համար) բոլոր փոփոխություններով և ավելացումներով,
63. Հարկային մարմիններ ներկայացված վերջին 2 եռամսյակիհարկային հաշվետվություններ (ԱԱՀ, եկամտային հարկ (վերջին ամսվա), հայտարարություն ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ, հայտարարություն արտոնագրային վճար վճարող համարվելու մասին),
64. ԻԱ Վարկառուի ընդհանուր ժողովի (մասնակիցների, բաժնետերերի, փայատերերի) որոշում վարկը ստանալու մասին, եթե ընկերության հիմնադիրը և տնօրենը տարբեր անձինք են,
65. Լիցենզիայի, համապատասխանության վկայականի կամ վկայագրի և այլնի պատճեն (եթե պարտադիր է գործունեության տվյալ տեսակի համար),
66. Վարձակալության պայմանագիր կամ սեփականության վկայական (առկայության դեպքում),
67. Եթե Փոխառուի գործունեությունը հանդիսանում է ուղևորափոխադրումներ կամ բեռնափոխադրումներ, մեքենաների տեխ.անձնագրերի պատճեն,
68. Բիզնեսի լուսանկարներ,
69. Հարցաթերթիկ (Հավելված 1 մինչև ավտոմատացումը) կամ ռեզյուե (Հավելված 3) 5.000.001 – 7.000.000 ՀՀ դրամ գումարի վարկերի վերագնման/գնման դեպքում,
70. ՀԴՄ (առաջին հերթին) կամ հաշիվ-ֆակտուրա այցելության ամսաթվի դրությամբ կամ 14 օրացուցային օրից ոչ ուշ ամսաթվի դրությամբ,
71. Պետ.ռեգիստրից տեղեկանք կամ Միասնական պետական գրանցամատյանից քաղվածք կանոնադրության փոփոխությունների և ավելացումների վերաբերյալ (ԻԱ Փոխառուի համար),
72. Այլ փաստաթղթեր (անհրաժեշտության դեպքում):
73. 57-67 կետերում նշված փաստաթղթերը անհրաժեշտ է կցել հայտին նախքան այն ՎՍԲ ուղարկելը:

ՖԱ երաշխավորների, փոխկապակցված անձանց համար.

74. Երաշխավորության տրամադրման նախնական դիմում /պարտադիր չէ/ (Հավելված 6),
75. Երաշխավորության տրամադրման դիմում (Հավելված 7),
76. Երաշխավորի, ԱՁ և ԻԱ հիմնադիրների ընտանիքի հիմնադիրների չափահաս անդամների (ում հետ փաստացի բնակվում է) անձը հաստատող փաստաթղթի պատճենը՝ անձնագրերի և սոցիալական քարտերի/հանրային ծառայությունների համարանիշի կամ ID քարտի պատճենները (հանրային ծառայությունների համարանիշի կամ սոցիալական քարտի բացակայության դեպքում՝ տեղեկանք բացակայության մասին),

77. Ֆինանսական երաշխավորների համար եկամուտների հաստատման տեղեկանք, այն դեպքում, եթե նրանք աշխատում են ուժային կառույցներում և դեսպանատներում կամ հայտարարագիր մնացած երաշխավորների համար, այդ թվում նրանց համար, ով աշխատավարձ է ստանում «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում բացված հաշիվներով, այդ թվում Բանկի աշխատակիցների (Հավելված 8),
78. 75-77 կետերում նշված փաստաթղթերը անհրաժեշտ է կցել հայտին նախքան այն ՎՍԲ ուղարկելը:

ԻԱ/ԱՁ երաշխավորների, փոխկապակցված անձանց համար.

79. Երաշխավորության տրամադրման դիմում (Հավելված 9.1, 9.2),
80. ԱՁ, ԻԱ տնօրենի/հիմնադրի անձը հաստատող փաստաթղթի պատճեն՝ անձնագրերի և սոցիալական քարտերի/հանրային ծառայությունների համարանիշի կամ ID քարտի պատճենները (հանրային ծառայությունների համարանիշի կամ սոցիալական քարտի բացակայության դեպքում՝ տեղեկանք բացակայության մասին),
81. ԱՁ/ԻԱ պետական գրանցման վկայականի պատճեն կամ Միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք,
82. ԱՁ/ԻԱ ՀՎՀՀ պատճեն (առկայության դեպքում),
83. Կանոնադրության պատճեն (ԻԱ համար),
84. Երաշխավորների համար հարկային մարմիններ ներկայացված վերջին 1/2 եռամսյակիհարկային հաշվետվություններ (ԱԱՀ, եկամտային հարկ (վերջին ամսվա), հայտարարություն ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ, հայտարարություն արտոնագրային վճար վճարող համարվելու մասին),
85. Ընդհանուր ժողովի (մասնակիցների, բաժնետերերի, փայատերերի) որոշում երաշխավորության տրամադրման մասին, եթե ընկերության հիմնադիրը և տնօրենը տարբեր անձինք են:
86. 79-84 կետերում նշված փաստաթղթերը անհրաժեշտ է կցել հայտին նախքան այն ՎՍԲ ուղարկելը:



** Բացառությամբ ԹՈՊ-ԱՊ վարկերի, որոնց տրամադրման գործընթացը ներկայացված է Գլուխ 4-ում:*
*** ՎՍԲ նախնական փորձաքննությունը պարտադիր չէ: ՓԲ վաճառքի գծով մենեջերը կարող է ուղարկել հայտը ՎՍԲ վերջնական փորձաքննության՝ կցելով լուսանկարը և հարցաթերթիկը/ռեզյումեն:*